ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով փորձագիտական սարքավորումների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՓՍ-18/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17.08.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Հարությունյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՓՍ-18/2» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«Ինթեչ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 4 թղ. շ 27, բն.14)**
2. **«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Վրացական 7-8)**
3. **«Դոլֆին» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Մոսկովյան 28)**

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ **«Դոլֆին» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտի. կազմակերպության կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ը, Հավելված 2-ը, Հավելված 2.1-ը, Հավելված 3-ը և Հավելված 4-ը ստորագրավծ չեն հրավերի 1-ին մասի 7.19 կետի համաձայն:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/		
				«Ինթեչ» ՍՊԸ	**«Դոլֆին» ՍՊԸ**	**«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ***
1	փորձագիտական ապարատային բլոկիռատորներ	3	175200	143700	142500	

2	փորձագիտական ապարատային բլոկիռատորներ	3	1011000	783000	817500	979900
3	փորձագիտական ապարատային բլոկիռատորներ	3	768000	599950	621750	739970

* Կազմակերպությունները հանդիսանում են ԱԱՀ չվճարող

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատման գործընթացը կասեցնել մեկ աշխատանքային օրով: Հաջորդ նիստը հրավիրել **2018թ. օգոստոսի 20-ին, ժամը 14:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Քարտուղարին՝

Այսօր էլեկտրոնային եղանակով «Դոլֆին» ՍՊԸ-ին տեղեկացնել անհամապատասխանության և դրա՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Հարությունյան

_____ Վ.Մկրտչյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով փորձագիտական սարքավորումների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՓՍ-18/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 20.08.2018թ. ժամը 14-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Հարությունյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Անհամապատասխանությունը վերացնելու մասին

<<Դոլֆին>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց.

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝
1 չափաբաժնի համար << **Դոլֆին** >> **ՍՊԸ** –ին,
2, 3 չափաբաժինների համար **«Ինթեչ» ՍՊԸ-ին**:

1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝

1 չափաբաժնի համար **«Ինթեչ» ՍՊԸ** –ին,
2, 3 չափաբաժինների համար << **Դոլֆին** >> **ՍՊԸ-ին**:

4. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետերի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Հարությունյան

_____ Վ.Մկրտչյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան